

## Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Ելեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

## Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

## **Утп түшілтөрө - Наши контакты - Our contacts**

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀՈՒՅՏԻ ՀԱՅՈՅ  
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ  
ՕՐԲՈՒՆ

ՀՏՇ. 941 (479.25):325  
Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)  
Ը 973

Գիտաժողովը նվիրվում է  
Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանառու Խմբագիր՝  
**Արտակ Մաղալյան**

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

**Արամ Սիմոնյան** – ԵՊՀ ռեկտոր, **Վաղիմիք Բարխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բարեկեն Հարուրյունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Արարատ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Ը 973 ԾՈՒԾԻՆ ՀԱՅՈՑ ՔՐԴԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ. Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր. – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, 2007

ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳԱՅԱՆ  
ԳԴՄԸ պարմարյան ամրիոն

## ԽԾԽԱԾՉՈՒԹ ՏԻԿՆԱՅՑ ՄԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱԿԱՎԱՆ ԿՅԱՆՔԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ ХII-ХIII ԴԱՐԵՐՈՒՄ

Յասարակական գործունեությամբ աչքի ընկած իշխանագուն կանանց մասին հիշատակվում են մատենագրական և վիմագրական սկզբնաղբյուրներում: Արցախում կանանց հասարակական գործունեությունը չէր սահմանափակվում ձեռնարկված շինարարությամբ և նվիրատվությամբ, այլ իշխանական տոհմերում աչքի ընկած կանայք լավագույն կերպով իրենց դրսերել են նաև որպես իշխանության տերեր, հմուտ դեկավարներ ու դիվանագետներ:

Այն, որ միջնադարյան Յայաստանում կանայք օժտված են եղել հողատիրության իրավունքով՝ համահավասար տղամարդկանց հետ, ինքնուրույն տերեր են եղել «հայրենիք»<sup>1</sup> կոչված հողերի, այսինքն՝ ժառանգական կալվածքների, գանձագին հողերի, գյուղերի այգիների և այլ անշարժ գույքերի, որոնց նկատմամբ ունեցել են ազատորեն տնօրինելու լիակատար իրավունք, հնարավորություն են տվել հայ կնոջը ինքնատիպ ձեռագիր թողնելու հասարակական բոլոր ոլորտներում: Արցախի պատմության մեջ իրենց հետքն են թողել այլ իշխանական տոհմերից Արցախ հարս եկած կանայք՝ Դոփը, Մինա խաթունը, Արզու խաթունը, Խորիշահը և ուրիշներ:

Միջնադարյան Յայաստանում իշխանագուն կանայք կրել են «պատրոն կամ պարոն» կոչումները, որը փաստում են ձեռագրերի հիշատակարաններում և վիմագրերում տեղ գտած վկայությունները: Սրանում բնորոշվել է կնոջ սոցիալ-

<sup>1</sup> С. Егiazаров. Изслѣдованія по исторіи армянского права публичнаго и частнаго. Вып. I, Киевъ, 1919, с. 73.

իրավական դրությունը: Կրելով այս տիտղոսները՝ կանայք ոչ թե սոսկ ձևականորեն են իրաստավորել իրենց սոցիալական պատկանելությունը տիրապետող ազնվական դասին, այլ ցուցաբերել են իրենց տիրական իրավունքները ավատական կալվածքների նկատմամբ: Այս իրավունքը թույլ է տվել հայ կոնջը կատարել նվիրատվություններ, գյուղերն ազատել հարկերից, ծավալել շինարարական գործունեություն և այլն<sup>2</sup>: Պատրոններն իրականացրել են տարաբնույթ գործառույթներ<sup>3</sup>:

Բազմաբնույթ գործունեությամբ հայտնի դարձավ Ներքին խաչենի իշխան Վախթանգի կինը՝ Սարգիս Զաքարյանի դուստր Խորիշահը: Վախթանգի և Խորիշահի անունից գրված հիշատակարաններում պահպանված վկայությունը խոսում է այն մասին, որ 1212 թ. նա ամուսնու հետ մասնակցել է Մեծի-րանից կամ Ս. Յակոբա վանքի կառուցմանը, իսկ 1216-ից սկսած՝ Գանձասարի փառահեղ վանքի շինությանը<sup>4</sup>: Այս մասին վկայում է Ս. Յակոբա վանքի արևատյան եկեղեցու սրահի բացվող մուտքից վեր պահպանված արձանագրությունը: «ՈԿԱ: /1212/ ԹԻՒ. ԵՍ ԽՈՐԻՇԱՀ, ԱՄՈՒՍԻՆ ՎԱԽՏԱՆԳԱ ՏՌ. ԽԱՉԵՆՅԱՅԻ, ԴՈՒՏՏՐ ՄԵԾԻՆ ՍԱՐԳԱՒ, ԶՈՅՐ ԶԱՔԱՐԻ ԵՇ ԻՒԱՆՈՅԻՑ, ՎԵՐԸՍԻՆ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԼԵՂԵՑԻՆ ՄԵԾԱՐԱՍԻՑԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ Ի ԲԱՐԵԽԱԱ ԶԱՒԿԱՑ ԻՄՈՑ...»<sup>5</sup>:

Գանձասարի գլխավոր տաճարը հիմնարկվել է Յասան Զալալ Դոլա իշխանի և նրա մայր Խորիշահի կողմից (1216 թ., ավարտվել է 1238 թ. և օծվել 1240 թ.): Արձանագրությունը պահպանված է տաճարի հյուսիսային պատին, պատուհանի

<sup>2</sup> Խ. Սամուելյան. Յայ իին իրավունքի պատմություն, հ. 1, Ե., 1939, էջ 246-247:

<sup>3</sup> Գ. Գրիգորյան. Պատրոն տերմինը միջնադարյան հայ աղբյուրներում. Յայոց պատմության հարցեր, Ե., 2005, թիվ 6, էջ 168:

<sup>4</sup> Բ. Ուլուքարյան. Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 142-144:

<sup>5</sup> ԴՀԿ, 5, էջ 12, Ն 2:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 36:

երկու կողմերում. «ՅԱՍՈՒՆ ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՍ ՅԱԻՐ ԵՒ ՈՐ-ԴՈ ԵՒ ՅՈԳՈՅՆ ՍՐՅՈ ԱՅՍ ԳԻՐ ԱՐՁԱՆԻ Է ԶՈՐ ՏԿԻԼ ԵՍ, ՆՈՒԱՍ ԾԱՌԱ ԱՅ. ԶԱԼԱՎ ՂԱԻԼԱՅ ՐԱՍԱՍ, ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ, ԹՈՈՍ ՄԵԾԻՆ ՐԱՍԱՍ, ԲՆԱԿԱՒՐ ԻՆՔՍԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱՆԿԱՍ ԱՇԽԱՌՅԻ, ԻՆՔՍԱԿԱԼ ԽԱՍԲԵՐՈՒԻ, ՅՈՔ-ՆԱՍԱՐՍԱՆ ՆԱՐԱՎԱՒԹ: ԶԻ ՅԱՅՐ ԻՄ Ի ՎԱԽՆԱՆ ԿԵՆԱՑ ԵԼԻՑԻ ԻՒՐ ԱՍՏԵԱՑՍ ԱՌԱՐՉ ԿՏԱԿԻ ՅԱՍԱՏԵԱՑ ԻՆՉ ԵՒ ՄԱՒՐ ԻՄ ԽՈՐԻՇԱՀԻ, ՈՐ ԵՐ ՈՈՒՏՏՐ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱ-ՆԻՆ ՍԱՐԳԱՒ ԶԻ ՇԻՆԵՑՈՒՈՒ ԵԿԵՂԵՑԻ Ի ԳԵՐԵԶԼՍԱՆԱՍԱՆ ՅԱՐՑ ՄԵՐՈՑ Ի ԳԱՍԶԱՍԱՐ, ԶՈՐ ՍԿՄԵԱԼ ՄԵՐՈՒ: ՈԿԵ: (1216) ԹՎԻՆ ՅԱՅՈՑ...»<sup>7</sup>:

Արցախում նվիրատվական և շինարարական գործունեությամբ աչքի ընկավ Արգու խարունը՝ Յաքերքի իշխան Վախթանգի կինը (Կայենի ու Մահկանաբերդի տեր և Տփոխի ամիրա Քրդի դուստրը): Իր ամուսնու հետ միասին Արգու խարունը նպաստել է Յուսիսարևեյան Յայատանի նշանավոր կենտրոնի՝ Նոր Գետիկ վանքի հիմնադրմանը (1191 թ.): Բազմաթիվ արձանագրություններ և գրավոր տեղեկություններ վկայում են, որ XII դարից սկսած վանքի հովանավորողը եղել է Արցախի ամենանշանավոր Վախթանգյան տոհմը: Առավել նշանակալից վաստակ ունի Վախթանգյան տոհմի տիկին Արգու խարունը:<sup>8</sup>

Արցախի նշանավոր վանական համալիրներից Դադի կամ Խութա վանքում (Դադի վանք է կոչվել Թաղենոս առաքյալի 70 աշակերտներից Դադի անունով, կամ Խութավանք, քանի որ կառուցված է Խութի (բլրակի) վրա)<sup>9</sup> XIII դ. շինարարա-

<sup>7</sup> ԴՀԿ, 5, էջ 38, Ն 82, տես նաև՝ Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն, էջ 156-157:

<sup>8</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 157, տես նաև՝ Բ. Ուլուքարյան, նույն տեղում, էջ 145-146, ԴՀԿ, 6, էջ 65, Ն 127:

<sup>9</sup> Բ. Ուլուքարյան, Դադի կամ Խութա վանք. «Էջմիածին», 1971, թիվ 6, էջ 62:

կան մեծ աշխատանք է ծավալել Արզու խարունը<sup>10</sup>: Նա է կառուցել Դադի վաճքի շենքերից ամենազեղեցիկն ու մեծածախսը՝ և Նշան կոչվող գմբեթավոր եկեղեցին, որն իր ճարտարապետական և կառուցողական վարպետությանը Արցախի լավագույն հուշարձաններից մեկն է<sup>11</sup>:

ԾՆՐԴԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ՀԱՐ ԵՒ ՄԻԱԾՆԻ ՈՐԴՈՅ ՆՈՐԱ ՅԻ. ՔԻ. ԵՒ ՊԱՐԳԵՒԱՔ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳՈՂ. ԵՍ ԱՐՉՈՒ-ԽԱԹՈՒՆ ՆՈՒԱՏ ՎՊԱԽԻՆ ՔԻ. ԴՈՒՏԾՐ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՔՐԴԻՆ ԵՒ ԱՄՈՒԽԻՆ ՎԱԽՏԱՏԱԿԱ ԹԱԳԱՌՈՐԱԶՍՈ ՏՆ. ՀԱԹԵՐՈՇ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՎԵՐԻՆ ԽԱԶԵՆՈ ՅՈՒԽՈՎ ՄԵԾԱՌ ՇԻՆԵԼՑԻ ԶԱԲ. ԿԱԹՈՂԻԿԵՄ Ի ՏԵՂՈԶ ՂԱՆԳԱՏԱՐԱՍԻ ԱՌՆ ԻՄՈ ԵՒ ԶԱՒԿԱՑ ԻՄՈՑ..... ԵՒ ՍԱՐՄԱՍԵՑԱՔ ԺԱՌԱՆԿՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԳԵՒՂ Ել ԱԳԱՐԱԿԱ ԻՒՐԵՎԱՑ ՍԱՐՄԱՍԱՔԸ, ԶԱՊԱՐԵՆ ԵՒ ԶԵԶԱՆԱՐԾԱՑ ԵՒ ԶՔԾԵԱՑ ԵՒ ԶԿԱՍԱՉԱՒՐՆ ՈՐ Ի ՎԱՅՐ ԶՈՐ, ԵՒ ԵՐԿՈՒ ՏՈՒՆ ՅԱՐՓԱ... (գմբեթավոր եկեղեցու հարավային պատի կենտրոնական կամարի մեջ)<sup>12</sup>:

Երկու եղբայրներ՝ Մարտիրոսը և Գրիգորը, և առաջինի կինը՝ Թամարը, որոնք հարուստ էին, բայց ոչ ազնվական, բարի նախանձով լցված Արզու խարունի նկատմամբ, 1231 թ. Դադի վաճքի մոտ կառուցում են Ս. Գրիգոր եկեղեցին: Այնուհետև, ոմն Գեորգ և նրա կինը՝ Կատան, վերջինիս հարավային կողմում ավելացնում են ևս մի խորան:<sup>13</sup>

Դադի վաճքի գմբեթավոր եկեղեցու արձանագրություններից մեկում հիշատակվում է Աևադա Յաթերքի հշխանը իր կնոց՝ Թաճերի հետ միասին, որոնք վաճքին նվիրել են այգի. «ԿԱՍԱԻՆ ԱՅ. ԵՍ ՍԵՒՊԱՍ ԻՇԽԱՆ ՈՐԴԻ ՍՍՊԱՏԱ ԵՒ ԱՄՈՒԽԻՆ ԻՄ ԹԱՅԵՐՆ ՏՈՒՔ Ի ԶԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՐՈՑ Ի ԴԱՐԻ ՎԱՆ

<sup>10</sup> Ռ. Բոյացյան, Դայ կանանց դերը միջնադարյան հուշարձանների կառուցման գործում (9-13-րդ դր.), ԼՀԳ, 1978, թիվ 9, էջ 80:

<sup>11</sup> ՂՀԿ, 5, էջ 197:

<sup>12</sup> ՂՀԿ, 5, էջ 198-199, Ն 708:

<sup>13</sup> Վ. Դացունի, Դայուիին պատմության առջև, Վեճետիկ, 1936, էջ 226:

ԶԿԱՐՄՍԶԱՏԱՓԱ ԱՅԳԵՍՆ...»<sup>14</sup>:

Դադի վաճքին նվիրատվություններ է կատարել Հասան Զալալի կին Մամքանը: Վաճքին նվիրել է հող, ջրաղաց, արձարե տուփ, շուրջառ, նաև Ի (20) շինակնատուն: Այս արձանագրությունը ցույց է տալիս, որ կանանց ունեցվածքի մաս են կազմել նաև «շինայեկնատուն»<sup>15</sup> կոչված կառույցները. «ԿԱՍԱԻՆ ԱՅ. ԵՍ ՍԱ-ԼՄՔԱՆ ԴՈՒՏԾՐ..... ՄԻԱԲԱՆԵՑԱ ԴԱՐԵՎԱՆԻՆ ԵՒ ԵՏՈՒ ԻՄ ԶԱՅՐԵՆԻՔԸ... ՈՐ ԻՄ ԵՂԲԱՐԵ ԵՏՈՒՆ ԻՆՉ ԵՒ ԵՄ ԿԱՄԱՔ ՏՈՒԻ Ի ՍԲ. ԿԱԹՈՒՂԻԿԵՄ :Ա: | ԶՈՐԵՑԱՅՅՈՂ, :Ի: (20) ԾԻՆԱԿՆԱՏՈՒՆ, :Ա: ԶԱՂԱՑ...»<sup>16</sup>:

Դադի վաճքի գմբեթավոր եկեղեցու բեմի գոգավորության վրա, ներքուստ, պատուհանից հարավ պահպանված արձանագրությունը վկայում է Մամքանի և որդու՝ Գրիգորի հետ կատարած նվիրատվության մասին. «ԱՒԳՍՈՒԹԲ. ԱՅ. ԵՍ ՍԱՍ-ՔԱՆ, ԱՄՈՒԽԻՆ ԱՐԻԱԿԱՆԻՆ ՋԱՍԱՆ ԵՒ ՈՐԴԻ ՍԵՐ ԳՐԻԳՈՐ ՏԵՐ ԳՈԼՈՎ ՏԵՂՈՅ ԶԱՅՐԵՆԱՔ ԵՒ ՍԵՐ ՊԱՐՈՍԵՔ ՅԱ-ՍԱՏԵՑԻՆ :ՉԾԶ: (1307) ԹԿԻՆ, ՏԿԱՔ Ի ՍԲ. ՈՒԽՏԻՆ ԶԾՈՎԱ-ՍԵՂ, ԶԱԶՈՒՈԱՆՑ, ԶԾԶՈՒԲԵԿԱՆՑ...»<sup>17</sup>:

Նույն Մամքանը 1251 թ. կառուցել է և. Ստեփանոս եկեղեցու (գտնվում է Արցախի Վաճառ գյուղատեղում) դամբարանի մատուռը. «ԵՍ ՍԱՍՔԱՆ, ԱՄՈՒԽԻՆ ԶԱԼԱԼ ԴԱԼԻՆ, ԹՈՈՆ ԲԱՂԱՑ ԹԱԳԱՌՈՐԻՆ, ԾԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՏԿԻ ԱԼԾՈ ՐՈԴԻ ԵՒ ԱՅԳԻ ԶԻՄ ԱՅԳՈՅ ՊՏՈՒՂՆ...»<sup>18</sup>:

Դադի վաճքին նվիրատվություն են կատարել Վախտանգ և Նանա ամուսինները. «ԿԱՍԱԻՆ ԱՅ. ԵՍ ՎԱՂՏԱՍԳ ՈՐԴԻ ՍՍ-

<sup>14</sup> ՂՀԿ, 5, էջ 202, Ն 714:

<sup>15</sup> Շինայեկնատունը շինականների, գյուղացու հետ առնչվող որևէ շինություն է, տուն կամ հաստատություն: Շինայեկնատուն բարդությունը ցույց է տալիս, որ նվիրատունները վաճքերին օտարել են ոչ թե առանձին շինականների, այլ նրանց ամբողջ ընտանիքը: Տես Ս. Ավագյան, Վիճական արձանագրությունների բառացնություն, Ե., 1978, էջ 248-249:

<sup>16</sup> ՂՀԿ, 5, էջ 200, Ն 710:

<sup>17</sup> ՂՀԿ, 5, էջ 206, Ն 724:

<sup>18</sup> ՂՀԿ, 5, էջ 80, Ն 239:

ՊԱՏԱ, ԾԱՌԱ ՅԻ. ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՆԱՍԱ ԱՊԱԽԻՆ ՔԻ. ՄԻԱԲԱ-  
ՆԵՑԱՔ ԴԱՐԵ ՎԱՍԱՑՆ ԵՒ ՏՈՒՎՔ Ի ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՐՈՑ ԶԵ-  
ՉԱՇՈՐԵՑՆ ԵՒ ԱՅԳԻ ՄԻ Ի ԽՈՉԵՆԵԿՍ Ի .. ԿՆԱՄԱՐԳ...»<sup>19</sup>:

1224 թ. իշխանաց իշխան Վախտանգի մահից հետո գա-  
հերեց իշխանական աթոռը մնացել էր առանց օրինական ժա-  
ռանգի: Իվանե Զաքարյանը գահերեցության ժառանգորդ չու-  
նեցող Յարերջի իշխանության տիրույթները միացրեց Վերին  
Խաչենի կամ Շարա իշխանությանը: Իշխանության աթոռն  
գրադեցնող Ղոփը (Իվանեի քույրը) դարձավ Խաչենի մեծա-  
գույն մասի լիիրավ տնօրենը: Ղոփն ինքն էր գլխավորում իշ-  
խանությունը<sup>20</sup>:

Ղոփն իր եղբայր Իվանե Աթարեկի հովանավորությամբ և  
ամեն տեսակ օժանդակությամբ Շարա իշխանության համար  
ստեղծում է մի արտոնյալ վիճակ Արևելյան Յայաստանի մասը  
իշխանությունների շարքում: Եվ պատահական չէ, որ Վերին  
Խաչենի այս իշխանությունը հետագայում, XIII դ. կեսից  
սկսած, կոչվում էր Ղոփյան: Յայ իրականության մեջ արտա-  
կարգ երևույթ էր, երբ իշխանական տոհմը կոչվում էր կնոջ  
անունով: Ղոփն էր դարձել գերդաստանի ազդեցիկ ներկայա-  
ցուցիչը, զավակների խնամակալը, ինչպես նաև իշխանության  
կառավարիչն ու գլխավորը<sup>21</sup>:

Սա խոսուն վկայություն է այն մասին, որ միջնադարյան  
Յայաստանում կինը մեծ տեղ է գրավել հասարակության մեջ  
և մասնակցել է երկրի, իշխանության կառավարման գործըն-  
թացին: Մեծ է Ղոփի դերը Խաչենի իշխանության գոյության  
ժամանակ: Ղոփը, որ ամուսնացած էր Վախտանգի որդի Յա-  
սանի հետ, մեծ ազդեցություն ուներ ընտանիքում, հայտնի է  
շինարարական և նվիրատվական գործունեությամբ: Ղոփն  
ապրել է երկար և, քանի որ որդիներն անշափահաս էին, հե-  
տագա իշխանապետական գործարքներում նա է հանդես եկել

<sup>19</sup> ՂՀԿ, 5, էջ 202, N715:

<sup>20</sup> Բ. Ուղուբարյան, Խաչենի իշխանությունը, էջ 147–148:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 152:

որպես գերդաստանի իրավական տնօրեն, գերդաստանին  
ժառանգություն հասած տիրույթների տեր ու տիրական<sup>22</sup>:

Ղոփն արձանագրություններում և գործնական հարաբե-  
րություններում լիիրավ իրավունքով էր հանդես գալիս նույ-  
նիսկ այն ժամանակ, երբ որդի Գրիգորն իշխանապետ էր և  
ներկայանում էր որպես Շարա ու շրջականների տեր<sup>23</sup>:

Խաղարի վանքի (Մարտակերտի շրջան) մատուրի հյու-  
սիսային պատին, արտաքուստ պահպանված արձանա-  
գրության համաձայն՝ Ղոփը կառուցել է իր տեգը Յովհաննեսի  
կերտած տաճարի գավիթը 1226 թ., նաև մի մատուր և վանքին  
տվել բազմաթիվ ընծաներ. «ԹՈՒԻՆ :ՈՐԴ: (1226). ԵՍ ՂՈՓՍ,  
ՂՈՒՍՏՐ ՍԱՐԳԱՒ, ՋՈՅ ԶԱՐԱՐԵՒ ԵՒ ԻՎԱՆԵ ՇԼԻՆԵՑԻ  
ԶԳԱՒԻԹԱՌ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՒ ԶԱՎՏՈՒՈՍ ԵՒ ՏՎԻ ԶԱՒԵՏԱՐԱՍՍ  
ԵՒ ՅԱՆԿԱՐԱ ԿՈՒՑ ԵՐԿԻՐՆ ԵՒ ԶԻՄ ՅԱԿՈՒՂԵՆԱՅ ՄԱՏԱ-  
ՂԻՍՆ...»<sup>24</sup>:

Խաղարի վանքի կանգուն և կիսավեր շենքերի վրա  
պահպանված արձանագրությունները վկայություններ են  
պահպանում նաև Տարսայիծ Օրբելյանի դստեր՝ Ասփեի կամ  
Ասփայի՝ Գրիգոր Ղոփյանի կնոջ շինարարական և նվիրա-  
տվական գործունեության մասին. «ՇՆՈՐԻՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԱ  
ԱՍՓԵ ԴՈՒՍՏՐ ԱՐՁԱՋՈՒՔ Իշխանին Տարսայիծին... զիմ յար-  
դար ընչից կանգնեցի բեմը սեղան ի գենանն Քրիստոսի ... և  
տվի զմեր խաս հողն, բլրի հանդի զնենեկպան, :Ա: բահի  
ջուր...»<sup>25</sup>:

Կանքից ներքև Թարթառ գետի կամուրջի մոտ կանգնեց-  
ված խաչքարի վրա պահպանված արձանագրության համա-  
ձայն կամուրջը կապել է Ասփան. «Կամաւն այ. Ես Ասփայ  
դուստր մեծ իշխանին Տարսայիծին և Սինախարունին և ամու-  
սին հսկայագոր իշխանին Գրիգորի, որդւոյն մեծ իշխանին

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 156–157:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 160:

<sup>24</sup> ՂՀԿ, 5, էջ 127, N 420:

<sup>25</sup> ՂՀԿ, 5, էջ 129, N 431:

Հասանայ աջի, տն Աղուանից. կապեցի զխաչս, շինեցի զկամուրջս՝ յիշատակ հոգոց մերոց անցելոց, ներկայի և ապագայր...»<sup>26</sup>.

Արցախում նվիրատվական գործունեությամբ հայտնի դարձավ Հասանի ամուսին Ռուզուքանը՝ Ելիկում Օրբելյանի դուստրը: Արձանագրությունը պահպանված է Մեծիրանից վաճի գավթի արևելյան պատի հյուսիսային մասում. «ԹՎԻՆ: ԶՃԳ: (1264) ԿՎՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ | ԱՅ. ԵՍ ՌԶՈՒՔԱՆ ԱՆԱՐԺԱՆ ՔԻ. ԱՄՈՒՏԻՆ ՀԱՍԱՍՅ, ՂՈՒՏԾՐ ՄԵԼԾ ԻՇԽԱՆԻՆ ԷԼԻԳՈՒՄԻՆ, ՊԱՐՈՆ ՄԱՒՐՆ ԹԱՄԹԵՒ ՄԻԱԲԱԼԵՑԱ ՏԱՍՍ ՄԵԾԻՐԱՆՑ ԸՆԾԱՒՒՔ. ՏՐ...»<sup>27</sup>:

Ելնելով վերոհիշյալ վկայություններից՝ կանայք ոչ միայն ծավալել են շինարարական և նվիրատվական գործունեություն, այլև եղել են հմուտ դեկավարներ ու դիվանագետներ: Արցախի իշխանական տան կանանց գործերը վառ ապացույց են հասարակական հարաբերություններում կնոջ ունեցած բացառիկ դերի:

<sup>26</sup> ՈՐԿ, 5, էջ 130, N 433:

<sup>27</sup> ՈՐԿ, 5, էջ 16, N 14: